

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒԼՂԱՐԻԱ.  
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

**Գիտաժողովի զեկույցների ժողովածու**

ԵՐԵՎԱՆ

**ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**2009**

**ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ՆԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՂԱՐ ԺՈՂՈՎՐԻՒ  
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ  
19-ՐԴ ԴԱՐԻ ՈՒ ԿԵՄԻՆ**

1853-1856թթ. Ղրիմի պատերազմով Արևելյան հարցը թևակոխեց նոր ժամանակաշրջան: Ռուսաստանն այս պատերազմում պարտություն կրեց, և Թուրքիան, Եվրոպական տերությունների հովանավորությամբ, միգուցե պահպանեց իր տարածքային ամբողջականությունը, այլև որոշ նվաճումներ կատարեց: Մակայն դա չհուսալքեց Թուրքիայի քրիստոնյա հպատակներին: Ինչպես բալկանյան ժողովուրդները, այնպես էլ հայերը շարունակեցին ազգային-ազատագրական պայքարը:

19-րդ դարի 60-70-ական թթ. բուռն թափով ապստամբական փրամադրություններ էին հաստանում հարկապես Բուլղարիայում: 1876թ. Բուլղարիայի ապրիլյան ապստամբությանը մասնակցեցին և օժանդակեցին բազմաթիվ հայեր:

Պոլսահայ փապագրիչների ջանքերով այսպեղ բուլղարերեն լեզվով հրատարակվում էին բազմաթիվ գրքեր, փարեգրքեր ու ամսագրեր, որոնք պոռպագանդում էին բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարները: Հայ փապագրիչներից Թադևոս Տիվիթճյանը, որը Կ. Պոլսի բուլղարական առաջին փարարանի հիմնադիրն ու փնտրենն էր, լույս էր ընծայում նաև անլեզու գրականություն, ինչպես նաև կոչեր ու թռուցիկներ և ինքն էլ փարածում Բուլղարիայում:<sup>1</sup>

1876թ. ապրիլյան ապստամբությունը թեև վաղօրոք նախապարտաստված էր՝ կուրակվել էր զենք ու զինամթերք, պարտաստելով ինքնաշեն հրանոթներ, սակայն դրանք բավարար չէին, իսկ ապստամբները զինվորական փորձ չունեին: Չհաջողվեց մշակել ապստամբության վերջնական պլանը: Նախափեսայել էր ապստամբությունը սկսել մայիսի 1-ին, սակայն բռնկվեց այն հանկարծակի, ապրիլի 20-ին՝ Կոպրիվշիցում, մարտությանը սկսված ձերբակալությունների պարճառով: Շուտով այն ընդգրկեց հսկայական փարածք՝ սպառնալով դառնալ համաբալկանյան հեղափոխություն: Մակայն մայիսի 20-ին Խրիստո Բոսլեի 175 հոգուց բաղկացած խմբի ջախջախումովն ավարտվեց՝ խեղդվելով արյան մեջ: Սպանվեց բուլղարական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Խրիստո Բոսլեը: Թուրքերը կոտորեցին մոտավորապես 30 հազար բուլղարների (ըստ այլ աղբյուրների՝ գոհվեց 45 հազար մարդ):<sup>2</sup> Հայտարարվոր բնակավայրեր ջնջվեցին երկրի երեսից:<sup>3</sup>

Պահպանվել են բազմաթիվ փնտրություններ ապստամբությանն ակրիվորեն օժանդակած հայերի մասին: Շատ հայեր իրենց կյանքը վրանգի ենթարկելով փրկում են բուլղար հեղափոխականների կյանքը: Նիշարակման են արժանի Ռուչուկի Արիստակես քահանայի, Հարություն Կրիթովի և այլոց արիությունն ու մարտուցած ծառայություններն այդ օրերին:<sup>4</sup> Նրանցից էր բուլղար լուսավորիչ-բանաստեղծ Նայդեն Գերովի մտերիմ բարեկամ, պլովդիվցի հայրենի վաճառական Արթին Գեղիկովը, հայրենի նաև Խոջա Արթին կամ Մոսկով Արթին (ռուսական հասարակական շրջաններին մոտ կանգնած լինելու համար) անուններով: Մրեղնոգորակի ապստամբության ժամանակ Արթին Գեղիկովին հաջողվում է փրկել կախաղանից 52 բուլղար ապստամբների:<sup>5</sup>

Պլովդիվի պեպրական պարկերասրահում պահվում է Գեղիկովի դիմանկարը, որը, ըստ Կ. Ճինգոլյանի ուսումնասիրությունների, նկարել է ապստամբության օրերին թուրք դահիճների ձեռքից նույնպես Արթինի ջանքերով փրկված բուլղար անվանի նկարիչ Ստանիսլավ Դոսպենկին:<sup>6</sup> Ենթադրում ենք, որ Արթին Գեղիկովի ծառայությունները սրանով չեն սահմանափակվել: Նայդեն Գերովը Ռուսաստանում կրթություն ստանալուց հետո վերադառնալով Բուլղարիա, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հանձնարարությամբ Պլովդիվում բացել էր ռուսական հյուպատոսություն և նշանակվել հյուպատոս:<sup>7</sup> Նրա պարտականություններից մեկն էլ ռուսական արթունիքին հավաստի լուրեր ուղարկելն էր: Եվ քանի որ պաշտոնական գործակալների միջոցով միշտ չէ, որ հնարավոր էր թուրքական իշխանությունների ու Եվրոպական դեսպանների գործունեության մասին ճիշտ և թարմ լուրեր ստանալ, օգտվում էին նաև փնտրացի վարախելի անձանց ծառայություններից: Կարծում ենք, որ Արթին Գեղիկովը, օգտագործելով իր հեղինակությունն ու լայն կապերը, նման ծառայություններ է մատուցել Նայդեն Գերովին:

17 բուլղար երիտասարդների է կախաղանից փրկել Խաչեր Վարդազարյանը՝ Պեպրուշիցա գյուղի զինված ապստամբության ճնշման ժամանակ: Բուլղարիայի ազատագրումից հետո, 1879թ. Պեպրուշիցա գյուղի ավագների խորհուրդը նրան պաշտոնական շնորհակալություն է հայտնել:<sup>8</sup>

Հայրենի են հայերի այլ անուններ ևս՝ Հովհաննես Ալաջաջյան, Գևորգ Ռուչուկյան (Թադևոս Պողոսյան) և ուրիշներ, որոնց մարտուցած ծառայությունների մասին հարգանքով և երախտագիտությամբ են խոսում բուլղարները: Բուլղար գրող Նիկոլա Աթանասովը հայերի մասին գրել է. «Նրանք մեզ մոտ եկան ոչ թե իբրև խղճով ու ողորմելի արարածներ, այլ հայարար այն գիտակցությամբ, որ ամեն ինչ գոհել են իրենց անկախության համար և պարտաստ են ուսուսի կռվելու բոլոր նրանց հետ, ովքեր գիտեն մեռնել իրենց ազատության համար»:<sup>9</sup>

Արևելյան Հայաստանի և Թիֆլիսի հայերը Մոսկվայի ու Պեպրուշիցայի սլավոնական կոմիտեների միջոցով, որն ի դեպ միակ թույլատրելի ճանապարհն էր, դրամական օգնություն էին ցույց տալիս բուլղար ապստամբներին: Ինչպես հաղորդում է «Մշակը», հայերը Թիֆլիսում կազմակերպում էին վճարովի երեկոներ, համերգներ, թատերական ներկայացումներ, դասախոսություններ, զբոսանքներ, հանգստակություն էին անում և ստացված ամբողջ դրամն ուղարկում բուլղարներին: Մեկ անգամ ուղարկված դրամը, օրինակ, կազմել է 1698 ռուբլի:<sup>10</sup> Սլավոնական կոմիտեներն այդ դրամով ոչ միայն անհրաժեշտ իրեր էին գնում ապստամբներ-

րի համար, այլև զենք ու զինամթերք:<sup>11</sup> Քանի որ այդ կոմիտեները համարվում էին բարեգործական կազմակերպություններ, կառավարությունը նրանց գործողությունների համար պարասխանաարվություն չէր կրում և թույլ էր տալիս ազատ գործել:

Ապրիլյան ապստամբության ճնշումից հետո կենդանի մնացած և ձերբակալությունից խուսափած բուլղար հեղափոխականների մի մասն անցավ Ռուսինիա ու Սերբիա, որտեղ հասունանում էին թուրքիայի դեմ պայքարազմական փրամադրությունները:

Ցարական կառավարությունը նախապարաստվեց աջակցել ապստամբներին, և 1877թ. ապրիլի 12-ին, այն բանից հետո, երբ թուրքիան մերժեց Կ. Պոլսում հավաքարմագրված դեսպանների միջազգային կոնֆերանսի նախագիծը՝ ինքնավարություն տալ ապստամբած Բոսնիային, Ներքեզովինային և Բուլղարիային, պարերազմ հայտարարեց նրան: Սկսվեց 19-րդ դարի ռուս-թուրքական վերջին պայքարազմն ու բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վճռական փուլը:

Պարերազմից առաջ Բալկաններում Օսմանյան կայսրության լծի փակ էին Բուլղարիան, Բոսնիան, Ներքեզովինան, Ալբանիան, Էպիրոսը և Թեսալիան: Չեռնոգորիան, Սերբիան և Ռումինիան թեև ինքնավարություն ունեին, սակայն շարունակում էին մնալ թուրքական գերիշխանության փակ: Իրադարձությունների այս շրջանում նորից վառվեց թուրքական լծից ազատագրվելու հայ ժողովրդի ոգին:

Ինչպես Ջ. Ղասաբյանն է նշում, «պարերազմի ընթացքում բազմաթիվ բուլղարահայեր, որոնք գրկվում էին թուրքական վարչական ծառայության մեջ և բանակում, լքում էին իրենց պաշտոնն ու ծառայությունը և անցնում ռուսական բանակի կողմը»:<sup>12</sup> Պարերազմական գործողություններին մասնակցելու համար, պարերազմի ընթացքում մոտ երկու հազար հայեր Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի փարբեր վայրերից եկան Բուլղարիա:<sup>13</sup> Ռազմական գործողություններին մասնակցելուց բացի, հայերը նաև նյութական ու բարոյական աջակցություն էին ցույց տալիս բանակին ու աշխարհագորին:

Տայեր կային նաև Ռուսաստանի կողմից պարերազմին մասնակցող ռումինական, սերբական և բուլղարական բանակների կազմում: Նրանցից շատերն աչքի ընկան ճակատամարտերում և արժանացան բարձր պարգևների:

1877թ. ապրիլի 12-ին ռուսները երկու ճակատներում էլ անցան հարձակման: Գլխավոր իրադարձությունները ծավալվում էին Բալկանյան ճակատում: Նախօրոք ձեռք բերված համաձայնությամբ նրանք մտան

Ռումինիա, իսկ հունիսի 27-ին անցան Դանուբն ու մարտական գործողություններ ծավալեցին Բուլղարիայում: Նամառ մարտերից հետո՝ գրավելով Սվիշտովը (Սվիստով), ռուսական բանակը հարձակումը շարունակեց նախորդ պարերազմներից ծանոթ երեք հիմնական ուղղություններով՝ Ռուջուկի, Թըռնովոյի և Նիկոպոլի:

Նույնիսի 8-ին ռուսական մի հեղանակային դիվիզիա առանց նախապարաստությունների գրոհեց Պլենայի ամրոցը, սակայն՝ մեծ կորուստներ կրելով նահանջեց: Նույնիսի 18-ին զեներալ Կրիդեները կրկնեց գրոհը և նորից անհաջող: Այս գրոհի ժամանակ սպանվեցին 120-րդ Սերպոլիսյան զենի շարք-կապիտան Բաժբեուկ-Մելիքովը, վիրավորվեցին 121-րդ Պենգայի զենի կապիտան Պողոսովը, 3-րդ հեծելազորային Ելեցյան զենի մայոր Ալանովը:<sup>14</sup> Պլենայի հաջորդ գրոհի ժամանակ օգոստոսի 30-31-ին գոհվեց Լիբավյան 6-րդ հեղանակային զենի կապիտան Լուդի-Մելիքովը, իսկ նոյեմբերի 28-ին՝ ամրոցի գրավման ժամանակ՝ 3-րդ Գրենադերային հրետանային բրիգադի կապիտան Մարկոսովը:<sup>15</sup>

Պլենայի երրորդ գրոհին մասնակցեցին նաև ռումինական զորքերը, որոնց կազմում էր ռումինական բանակի հայազգի սպա Միխայիլ Չերքեզը (1839-1894): 1877թ. նոյեմբերի 28-ին, երբ թուրքական սրվար գորագունդը Օսման փաշայի հրամանատարությամբ ճեղքման անհաջող փորձ կատարեց՝ շրջապարտումից դուրս գալու և դեպի Սոֆիա փախչելու համար, Պլենան հանձնվեց:

Ըստ Ս. Քոլանջյանի ուսումնասիրությունների, պարտված Օսման փաշան իր սուրը հանձնել էր Մ. Չերքեզին:<sup>16</sup> Նա այս պարերազմում արժանացավ զեներալի կոչման: Մ. Չերքեզն աչքի է ընկել նաև Սնըրդանի ճակատամարտում:<sup>17</sup>

1877թ. հուլիսի 19-ի թիվ 45 հրամանով 8-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար զեներալ իշխան Մանվելովը նշանակվում է 13-րդ բանակային կորպուսի գլխավոր ուժերի հրամանատար: Նրա փրամադրության փակ են դրվում 35-րդ հեղանակային դիվիզիայի 3 զեներ 3 հրետանային մարտկոցներով, Դոնյան թիվ 8 զենի երեք հարյուրակ և կորպուսի հրետանու չորս մարտկոց:<sup>18</sup>

Օգոստոսին զեներալ Մանվելովի գլխավոր ուժերը համալրվում են նոր միավորումներով և օգոստոսի 29-ին նա որոշում է հակառակորդի ուժերի բանակի և փեղաբաշխման մասին ավելի հստակ պարկերացում ստանալու նպատակով կեղծ գրոհ ձեռնարկել Երենջիկի, Աբլավի, Վոդիցայի և Կովաչիցայի ուղղություններով: Այդ գորաշարժերը փայլուն կերպով իրականացվում են օգոստոսի 31-ին:<sup>19</sup>

Սեպտեմբերի 4-ին իշխան Մանվելովը նշանակվում է Կապրիվիցայի մոտ գտնվող գործերի հրամանատար,<sup>20</sup> իսկ սեպտեմբերի 18-ին՝ XIII կորպուսի առաջավոր գծի հրամանատար:<sup>21</sup>

Սեպտեմբերի 22-ին գեներալ-լեյտենանտ իշխան Մանվելովը կրկին կեղծ հարձակում է ձեռնարկում Պիզանցի և Տուրլակի ուղղությամբ, նաև նպատակ ունենալով վնասել հակառակորդի հաղորդակցության ուղիները և Ռուշչուկ-Ռազգրադյան երկաթուղին:<sup>22</sup> Նույնպիսի մի գորաշարժ է իրականացվում նոյեմբերի 22-ին Սոլենիկի և Կոնստանցի ուղղությամբ, որը հնարավորություն տվեց իշխան Մանվելովին, որ այդ ժամանակ Ռուշչուկյան ողջ ջոկատի առաջավոր գծի հրամանատարն էր, ճշտել հակառակորդի հիմնական ուժերի կենտրոնացման ուղղությունները՝ խուսափելու ռուսական առանձին ջոկատների շրջափակումից:

Ռուսական բանակի 1-ին հեծելազորային դիվիզիայի հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ Դոխտորովը, որը օգոստոսի 3-ին հրաման է ստանում իր դիվիզիայի հետ մեկնել Դանուբյան գործող բանակ:<sup>23</sup> Սեպտեմբերի 29-ին նա նշանակվում է Կալարաշյան ջոկատի պետ, որի մեջ մտնում են բացի 1-ին հեծելազորային դիվիզիայից, Օմսկյան 96-րդ - հեծակային գունդը, 2 հրետանային մարտկոց, Դոնյան կազակական 40-րդ գունդը և Դոնյան կազակական թիվ 4 մարտկոցի դասակը:<sup>24</sup> 1-ին հեծելազորային դիվիզիայի 1-ին բրիգադի հրամանատարն ու Օլպենիցի ջոկատի պետն էր գեներալ-մայոր Աբամելիքը:<sup>25</sup>

Ներոսական էր հասկանալի 1877թ. օգոստոսի 9-ին սկսված Շիպկայի պաշտպանությունը, որը մեծ նշանակություն ունեցավ պարտերազմի ընթացքի համար: Փոքրաթիվ ռուսական ջոկատը բուլղարական աշխարհագորայինների հետ, ընդհանուր թվով շուրջ 6 հազար հոգի, օգոստոսի 9-13-ը՝ անձնագոհ կերպով պաշտպանեց լեռնանցքը Սուլեյման փաշայի 27 հազարանոց բանակի գրոհներից՝ օրական հետ մղելով 10-14 կապտոլի հարձակում, մինչև օգնության հասավ ռուսական 14-րդ հեծակային դիվիզիան: Լեռնանցքի պաշտպանությունը շարունակվեց չորս ամիս: Դրա շնորհիվ հնարավոր դարձավ գրավել Պլենան, թուրքական գորգերից ազատագրել ամբողջ Նյուսիսային Բուլղարիան և ռուսական հիմնական ուժերը նետել Նարավային Բուլղարիա:<sup>26</sup>

Շիպկայի պաշտպանության մասնակիցների մեջ էլ հայեր կային: Վերոհիշյալ ցուցակներից մեկում նշվում է թուրքական առաջին գրոհի հետ մղմանը մասնակցած 3-րդ հրաձգային գումարտակի մայոր Լազարևի անունը, որը գոհվեց 1877թ. օգոստոսի 11-12-ի մարտերում:<sup>27</sup> Շիպկայի պաշտպանները պարզևարովեցին հատուկ արձաթեմ մեղալներով: Ի

դեպ, պարտերազմում այս պարովին արժանացան նաև Բայազետի պաշտպանները, մինչդեռ պարտերազմի մյուս մասնակիցներն սրացան բրոնզե մեդալներ:<sup>28</sup>

Շիպկայի պաշտպանության ժամանակ աչքի ընկավ 14-րդ հեծակային դիվիզիայի 14-րդ հրետանային բրիգադի հրամանատար գեներալ-մայոր Խուդյակովը, որի մասին գեկուցագրերում գրվել է. «14-րդ հրետանային բրիգադի հրամանատարները, հրաշալի կատարելով իրենց գործը ռմբահարման, հրետանակծության ժամանակ, իրենց սառնասիրտ հնարամտությունն ու անվեհեր քաջությունը դրսևորեցին նաև հակառակորդի հարձակման ժամանակ: Սեպտեմբերի հինգը դրա ամենափայլուն օրինակն է»:<sup>29</sup>

1877թ. հունիսի 15-ին Միստովի մոտ Դանուբի անցման համար սբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով, «քաջության համար» մակագրությամբ, պարգևատրվում է 54-րդ Մինսկյան գնդի փոխպորուչիկ Գրիգորի Աջեմովը:<sup>30</sup> Ավելի ուշ՝ օգոստոսի 12-14-ին Շիպկայի լեռնանցքի պաշտպանության համար Աջեմովը պարգևատրվում է սբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանով:<sup>31</sup> 1877թ. դեկտեմբերի 28-ի մարտի համար նրան շնորհվում է պորուչիկի կոչում:<sup>32</sup>

Թռնտովոյի ուղղությամբ գեներալ Ի.Վ. Գուրկոյի հրամանատարությամբ գործող ռուսական բանակի հիմնական ուժերի հետ էր գնդի հրամանատար գեղապետ Դոլոխանովը, որն իր գնդով մասնակցել է Գաբրովոյի ազատագրմանը: Երկրասարդ սպա Մակայուտենկոյի նամակներից, որոնք վերջինս հասցեագրել էր իր ծնողներին, պարզվում է, որ գեղապետ Դոլոխանովը ռուսական բանակի մի շարք սպաների հետ Բուլղարիա է փեղափոխվել Սերբիայից 1877թ. մայիսին՝ բուլղարական կամավորական գնդերի կազմակերպմանը մասնակցելու համար: Մակայուտենկոն բազմիցս շեշտում է այն սերն ու հարգանքը, որ գնդի զինվորները փածում էին Դոլոխանովի հանդեպ:<sup>33</sup>

Դեպի Ադրիանապոլիս գեներալ Գուրկոյի գլխավորած հեծելազորային արշավանքի մասնակիցների մեջ էին նաև լեյք-գվարդիական Պավլովյան գնդի եկթասպա Նայկանովը, կապիտաններ Սերվիյանը և Նախվերդովը, որոնք մասնակցեցին Լեռնային և Դաշտային Դուբնյակի, Թեյլի-ժի, Սոֆիայի ու Պլովդիվի գրավմանը:<sup>34</sup>

Սերբական ռազմական ուժերի կազմում է ծառայել ռուսական բանակի հայազգի գեղապետ Դոխտորովը, որը դեռևս պարտերազմից առաջ, 1876թ. հունվարին էր գործուղվել Բելգրադ՝ մասնակցելու սերբական զորամիավորումների ստեղծմանը:<sup>35</sup>

Պարերազմն սկսվելուց հետո, արդեն Ռուսական ջոկարի կազմում, գնդապետ Դոխտորովը ակտիվ հեռախոսակալան և կազմակերպչական աշխատանք է ծավալել: Նրա գործունեության մասին շարք ուղարկած իրենց հեռագրերում և զեկուցագրերում բազմիցս դրական են արտահայտվել XII և XXIII բանակային կորպուսների հրամանատարները:<sup>36</sup>

Արձանագրված ոչ լրիվ փոխակները համոզիչ կերպով վկայում են, որ պարերազմին բալկանյան ժողովուրդների հետ մասնակցել են նաև փեղի հայերը:

Շարքերը դիմում էին ռուսական զինվորական հրամանատարությանը՝ խնդրելով իրենց ծառայության վերցնել: Պահպանվել է Ռուսական բնակիչ հայ Կ. Ավանեսովի խնդրագիրը Ա.Մ. Դոնդուկով-Կոբսակովին, որտեղ նա խնդրում է իրեն ընդունել ռուսական բանակում ծառայության:<sup>37</sup>

Պարերազմի հենց սկզբին, 1877թ. ամռանը հայտնի դարձավ վառնացի երիտասարդ Երանոս Կարապետի Երանոսյանի (1844-1877) խիզախությունը: Երանոսյանը Սևծովյան Բալչիկ նավահանգստային քաղաքի հեռագրափոստարան պետն էր: Աշխատանքի բերումով նա փեղեկանում է, որ թուրք բաշիբոզուկները պարտաստվում են կոտորել Կավառնայի քրիստոնյա բնակչությանը: Երանոսյանն անմիջապես մեկնում է Կավառնա, զգուշացնում փեղի բնակչությանը և զենքը ձեռքին նրանց հետ կռվում քաղաքի պաշտպանության համար, որտեղ և 1877թ. հուլիսի 19-ին զերի է ընկնում և սպանվում թուրքերի կողմից:<sup>38</sup> Թուրքերի այն հարցին, թե ինչու է կռվում իրենց դեմ, Երանոսյանը պատասխանում է. «Ձգարում եմ ազատ և անկախ հայրենիքի՝ Բուլղարիայի, ուր ծնվել եմ և ուր ցանկանում եմ մեռնել»:<sup>39</sup> Թուրքական լծից երկիրը ազատագրելուց հետո Կավառնայի հասարակական խորհուրդը որոշեց հավերժացնել հերոսի անունը և Երանոսյանի անունով կոչեց քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը:

Պարերազմի սկզբին Պլովդիվի հեռագրարան մեկ այլ ծառայող՝ Պողոս Էլմասջյանը (1860-1932), ծառայության կանչվելով թուրքերի կողմից, լքել էր ծառայության վայրն ու կամավոր անցել ռուսների կողմը: Պլովդիվի գրավումից հետո նա նշանակվեց փեղի զինվորական հեռագրափոստարան կայանի հեռագրավար և մեծ ծառայություններ մատուցեց փեղի բնակչությանն ու ռուսական հրամանատարությանը:<sup>40</sup>

Պարերազմի ժամանակ կախադանից ու հալածանքներից շարք բուլղարների կյանք է փրկել Պլովդիվի նահանգային գրասենյակի կառավարչի գլխավոր քարտուղար, իսկ այնուհետև՝ 1877 թվից Պլովդիվի դատարանի քննիչ Կարապետ Թավադյանը (1842-1895):<sup>41</sup>

Փոստարան ևս մեկ աշխատող՝ Շումենի հեռագրափոստարան պետ, Վառնայի հայ քահանայի որդի Կարապետ Փափազյանը (1850-1940), մի գիշեր հեռագիր ընդունելով իր աշխատակից Կոստակի Միխայլովին մահապատժի ենթարկելու մասին՝ պայմաններ ստեղծեց վերջինիս փախուստը կազմակերպելու և նրան փրկելու համար:<sup>42</sup>

1877թ. հայտնի դարձավ Թաթար-Բազարջիկի հեռագրափոստարան երեսուներեքամյա հեռագրավար Նովհաննես Սվաճյանի (1843-1906) խիզախությունը: Երբ գեներալ Գուրկոն մոտեցավ Բազարջիկին, նահանջող Սուլեյման փաշան հրամայեց զենքի ընդունակ ամբողջ բնակչությանը կտրակել կայարանամերձ Բաշիգարով (Գլավինցա) գյուղի դաշտում: Մի քանի օր նրանց պահեց բաց դաշտում, սուլթանից հեռագիր սպասելով, թե ինչպես վարվի: Նունվարի 2-ի գիշերը՝ Ն. Սվաճյանի հերթապահության ժամանակ, սրացվում է հեռագիրը, որով սուլթանը հրամայում է վառել քաղաքն ու կոտորել բնակչությանը: Սվաճյանը վրանգելով կյանքը՝ փոխում է հեռագրի բովանդակությունը և հեռագրարանը հերթապահող թուրք սպային հայտնում, թե սուլթանը «հրամայում է բնակչությանը ձեռք չբռնել, քաղաքը հանձնել անվնաս»: Զաղաքային թանգարանում պահպանվում է հեռագրի իսկական փեղստեղծ հեռագրաժապավենի վրա: Բազարջիկի փողոցներից մեկը կոչվում է Սվաճյանի անունով: Փողոցի սկզբում կանգնեցված է նրա կիսանդրին:<sup>43</sup>

Պարերազմից հետո, 1880թ., Բալկանյան ռազմաճակատի գլխավոր շարքի կողմից գեներալ-մայոր Դոմանովիչի ներկայացրած ցուցակի համաձայն, «ջերմեռանդության համար» արծաթե մեդալներով պարգևատրվեցին Ադրիանապոլսի քաղաքային խորհրդի նախկին նահապահ Գրիգոր Յաղջյանը, քաղաքի վերստուգիչ հանձնաժողովի անդամ Սադան Բարոյանը, Ադրիանապոլսի նահանգային գանձարան քարտուղար Արսեն Մինասյանը, Ադրիանապոլսի ադմինիստրատիվ խորհրդի քարտուղար Իոհան Դերոնյանը, Ֆիլիպոպոլի ոստիկանության քարտուղար Գրիգորի Կարապետովը և ուրիշներ:<sup>44</sup>

Բուլղարիայի ռազմածովային նավատորմում գլխավոր վիրաբույժ է ծառայել պոլսեցի հայտնի բժիշկ Մ. Թյությունջյանը: Նա անձնական կապեր ուներ բուլղարական հայտնի հայրուկ Իլյա Վոյեվոդի և ուրիշ հեղափոխականների հետ: Պարերազմի ժամանակ Մ. Թյությունջյանը Կ. Պոլսից փախչում է Բուլղարիա:<sup>45</sup>

Բուլղարիայի նահանգներում և քաղաքներում ստեղծված բարեգործական «Միասնություն» կոչվող կոմիտեներում նույնպես հայեր էին ընդգրկված, որոնք օգնում էին գաղթականներին: Պահպանվել է Թոռնովոյի կոմիտեի անդամ Իվան Ղասաբովի անունը:<sup>46</sup>

Այսպիսով, ռուսական բանակը բուլղարացիների, սերբերի, ռումինացիների, փեղի ամբողջ քրիստոնյա բնակչության, այդ թվում և հայերի աջակցությամբ և օգնությամբ 1878թ. հունվարին արդեն թուրքերից ազատագրեց Բուլղարիան: Հունվարի 15-17-ին Ֆիլիպոպոլի մոտ ջարդելով Մուլեյման փաշայի զորախումբը, ռուսական բանակը, առանց դիմադրության հանդիպելու, մտավ Ադրիանապոլիս և պատրաստվեց հարվածել Կ.Պոլսին: Բարձր Դուռն շրպապեց բանակցություններ սկսել զինադադարի մասին, որն ստորագրվեց հունվարի 31-ին:

Բալկանյան ռազմաճակատի հաջողությունները մեծապես կախված էին նաև Կովկասյան ճակատի գործողություններից, քանի որ թուրքերն իրենց բալկանյան զորքերին պարենավորում և համալրում էին կայսրության ասիական փրկության հաշվին, որոնց շուրափույթ գրավումով թուրքական բալկանյան բանակը կզրկվեր ամեն փեսակ օգնությունից:

Կովկասյան ճակատում 1878թ. փետրվարի 10-ին, Էրզրումի գրավումով և Մուխարաբ փաշայի ջախջախումով, ռազմական գործողություններն ավարտվեցին:

Ինչպես հայտնի է, 1878թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Սան-Ստեֆանոյում, հայ մեծահարուստ Առաքել բեյ Դադյանի ամառանոցում կնքվեց հաշտության պայմանագիրը՝ ռուսական արքունիքում նախօրոք մշակված կետերով:<sup>47</sup> Ի դեպ, Առաքել բեյ Դադյանը վառողի գործարանատեր էր: Նրա փունը ռուսական բանակի գլխավոր հրամանատարի նստավայրն էր, «ուր ռուս զինվորական հրամանատարները հավաքվում էին թեյի, փեղի էին ունենում հանդիպումներ...»:<sup>48</sup>

Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն Բուլղարիան հրոչակվեց ինքնավար իշխանություն՝ ամբողջ բուլղարական և մակեդոնական փարածքներով:<sup>49</sup>

Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը 19-րդ դարում չավարտվեց: Այն պիտի շարունակվեր նաև 20-րդ դարի սկզբին, որին իրենց մասնակցությունը դարձյալ պետք է բերեին մեծ թվով հայեր:

1. Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 514:
2. Տես Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 70-ական թթ.), էջ 27:
3. История Болгарии, т. 1, сс. 276-292.
4. Ներսիսյան Ա.Ն., Բուլղար ժողովրդի պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ XIX դարի 70-ական թվականներին, Երևան, 1978, էջ 170:
5. Ծինգոզյան Կ.Ն., Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից (19-րդ դար), Երևան, 1966, էջ 56, փես նաև Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության, հատոր Բ, էջ 118:

6. Ծինգոզյան Կ.Ն., նշվ. աշխ., էջ 56:
7. Никитин С., Возникновение Московского славянского комитета, "Вопросы истории" 1947, N 8, стр. 52.
8. Овнанян С.В., Армяно-Болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX в., Ереван, 1968, չ3 89:
9. "Походъ", 1941, апрель 27, с. 5.
10. «Մշակ», 1876, 26 օգոստոսի:
11. Виноградов В.И., Русско-турецкая война 1877-1878гг. и освобождение Болгарии, М., 1978, с. 76-77.
12. Ղասաբյան Ջ., Էջեր հայ-բուլղարական կապերի պատմությունից, «ՊԲՆ», 1982, N 4, էջ 88:
13. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 665:
14. РГВИА, ф. 485, оп 1, д. 48, лл. 8-8об.
15. Նույն փեղում, թթ. 18, 36:
16. Քոլանջյան Ս., Հայկական արժեքները Ռումինիայում, «Հայրենիքի ծայն», 1985, հոկտեմբերի 30:
17. Հայ ժողովրդի պատմություն, հ 6, էջ 676:
18. "Сборник материалов по Русско-турецкой войнъ 1877-1878гг. на Балканскомъ полуостровъ", выпускъ 4, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-исторической комиссии Главного штаба, С. Петербургъ, 1898, сс 11-12.
19. Նույն փեղում, էջ 63-65:
20. Նույն փեղում, էջ 75:
21. Նույն փեղում, էջ 82:
22. Նույն փեղում, էջ 83:
23. "Сборник материалов по Русско-турецкой войнъ 1877-1878гг. на Балканскомъ полуостровъ", выпускъ 7, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-истотической комиссии Главного штаба, С. Петербургъ, 1898, с 1.
24. Նույն փեղում, էջ 3:
25. Նույն փեղում, էջ 16:
26. История Болгарии, т. 1, с. 306.
27. РГВИА, ф. 485, оп. 1, д. 48, л 12об.
28. Виноградов В.И., Русско-турецкая война 1877-1878гг. и освобождение Болгарии, М., 1978, с. 115:
29. "Сборник материалов по Русско-турецкой войнъ 1877-1878гг. на Балканскомъ полуостровъ", выпускъ 5, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-истотической комиссии Главного штаба, С. Петербургъ, 1898, с 181-182.
30. Նույն փեղում, էջ 371:
31. Նույն փեղում, էջ 391:
32. Նույն փեղում, էջ 418:

33. РГВИА, ф. 485, оп. 1, д. 387, лл. 9-9об., 100-103.
34. Նույն փնդում, գրք 48, թ. 42:
35. Նույն փնդում, գ. 766, թ. 1:
36. "Сборник материалов по Русско-турецкой войне 1877-1878гг на Балканском полуострове", выпуск 38, журнал военных действий XIII армейского корпуса, изд. Военно-истотической комиссии Главного штаба, С. Петербург, 1903, сс. 54, 78, 114, 116, 119, 130, 131, 135, 163, 174, 243, 245, 248, 278, 285, 345.
37. РГВИА, ф. 846, оп.16, д. 8802, л. 58.
38. "Походь", 1941, апрель 27, с. 14.
39. Գաբրիելով Ա., Նայերը Բուլղարիայում, «Սովետական Նայասրան», 1966, մայիսի 27, N 113:
40. "Походь", 1941, апрель 27, с. 14.
41. Նույն փնդում:
42. Овнян С.В., ЭЯн. աշխ., էջ 90:
43. Արախանյան Ա.Գ., Նանառք ուրվագիծ հայ գաղթականության պատմության, հ. Բ, էջ 118, Овнян С.В., նշվ. աշխ., էջ 116-117, Винаградов В.И., նշվ. աշխ., էջ 223:
44. РГВИА, ф. 430, оп. 1, д. 576, лл. 3-4.
45. Улунян А.А., Апрельское восстание 1876г. в Болгарии и Россия, очерки, АН СССР, изд. "Наука", М., 1978, стр. 192.
46. Տես "Освобождение Болгарии от Турецкого ига", т 3, с. 224-225:
47. Նայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 107:
48. Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Նայասրանը (19-րդ դարի 70-ական թթ.), Երևան, 1972, էջ 142:
49. История Болгарии, т. 1, М., 1954, с. 312-31